

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷՊՈՒԱՐԴ ՄԿՐՏՉԻ ԱՎԱԳՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹԸ

**Ժ. 02.02. «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լ.Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների

դոկտոր Գ.Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

բանասիրական գիտությունների

թեկնածու Ն.Ն.ՄԿՐՏՐԶՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2013թ. հունիսի 10 -ին՝ Ժ. 15 -ին, ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝

Ն.Ս.ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱՎԻՐ

Սույն ատենախոսությունը նվիրված է քաղաքական բանավեճի՝ որպես խոսույթի մի տարատեսակի, լեզվամշակույթի ուսումնասիրությանը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է խոսքի ազդեցության ռազմավարության, քաղաքական բանավեճի և նրա ժանրերի ուսումնասիրության անհրաժեշտությամբ, հայ և ամերիկյան հաղորդակցական մշակույթների զուգադրական ուսումնասիրության միջոցով քաղաքական հեռուստաբանավեճի՝ որպես խոսքային յուրօրինակ ժանրի, ազգային առանձնահատկությունների վերհանման նպատակադրումով, նմանատիպ հետազոտությունների մեթոդների և հմարների մշակման կարևորությամբ, ինչպես նաև հասարակության համար մեծ հետաքրքրություններ կայացնող քաղաքական կյանքի, մասնավորապես քաղաքական բանավեճի հաղորդակցական և լեզվամշակութային առանձնահատկությունների բացահայտման առումով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է՝ ուսումնասիրել քաղաքական հեռուստաբանավեճերի ազգային առանձնահատկությունները հայկական և ամերիկյան հաղորդակցական մշակույթներում, պարզել դրանց հաղորդակցական և լեզվաոճական բնորոշ հատկանիշները և տալ համապատասխան գնահատական քաղաքական բանավեճի լեզվամշակութային առանձնահատկություններին: Հաշվի առնելով ուսումնասիրության նպատակը՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Խոսույթի ամենատարբեր, երբեմն իրարամերժ մոտեցումների համատեքստում հստակեցնել քաղաքական խոսույթի սահմանումը որպես ինստիտուցիոնալ երկխոսության տեսակ:

- Հստակեցնել քաղաքական բանավեճի՝ որպես քաղաքական երկխոսության տարատեսակի սահմանումը:

- Ձևավորել գիտական մոտեցում հաղորդակցական վարքագծին որպես ժողովրդի մշակութային կարևոր բաղադրիչի:

- Մշակել համապատասխան մոդել հաղորդակցական վարքագծի նկարագրման նպատակով:

- Մշակել ազգային հաղորդակցական վարքագծի նկարագրման արդյունավետ մեթոդներ և միջոցներ:

- Մշակել համապատասխան մոդելներ քաղաքական հեռուստաբանավեճի լեզվաոճական համակարգված վերլուծություններ կատարելու նպատակով:

Մեր առջև դրված խնդիրների հանգուցալուծմանը հասնելու համար մենք որպես վերլուծության նյութ օգտագործել ենք ժամանակակից հայ և ամերիկացի քաղաքական գործիչների հեռուստահարցազրույցները՝ որպես քաղաքական բանավեճի ցայտուն օրինակ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՑԸ: Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվել ուսումնասիրության

առարկա դարձնել քաղաքական բանավեճը՝ որպես քաղաքական խոսույթի մի տարատեսակ, ինչպես նաև առաջին անգամ հետազոտության է ենթարկվել քաղաքական հեռուստաբանավեճը այնպիսի գիտա-ճյուղերի շրջանակներում, որոնք համեմատաբար նոր են և որտեղ դեռևս շատ հարցեր չեն ստացել գիտական հիմնավորում: Եվ, հատկապես, գործնական վերլուծությունների ենթարկելով երկու մշակույթների՝ հայ և ամերիկյան քաղաքական գործիչների հեռուստաբանավեճերը, փորձ է արվել վեր հանել բանավոր հաղորդակցության ազգային առանձնահատկությունները այս ժանրում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Հետազոտության տեսական նշանականությունը խոսքային ռազմավարության հասկացության ճշգրտումն է, հետագայում քաղաքական խոսույթի ժանրային տեսության մշակումը:

Հետազոտության գործնական նշանակությունն է նրա արդյունքների հնարավոր օգտագործումը հաղորդակցական լեզվաբանության, ճարտասանական խոսքի, խոսքային ազդեցության տեսության բուհական դասընթացներում: Այն կարող է նաև հետաքրքրություն ներկայացնել քաղաքական բանավեճով զբաղվող հեռուստալրագրողների և քաղաքական գործիչների համար:

ՀԱՄԱՋՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ: Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են լեզվաբանական վերլուծության այնպիսի **մեթոդներ**, ինչպիսիք են հակադրությունների, բաղադրիչային և համատեքստային, հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդները: Աշխատանքում կիրառվել են նաև այնպիսի համագիտական մեթոդներ, ինչպիսիք են վերլուծությունը (անալիզ), համադրությունը (սինթեզ), համեմատությունը և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, ուսումնասիրության շրջանակներում կատարված հետազոտությունն ամփոփող հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 154 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ տրված է հարցի պատմությունը: Խոսվում է աշխատանքի գիտակարգային և բաժնային սահմանների, ինչպես նաև աշխատանքում կիրառված սկզբունքների մասին: Հիմնավորվում է թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, սահմանվում են խոսույթ, քաղաքական խոսույթ, քաղաքական բանավեճ, հաղորդակցական վարքագիծ հասկացությունները:

ԳԼՈՒԽ ԱՈՒՋԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատաքի առաջին գլխում, որը բաղկացած է երեք բաժիններից («Խոսույթը՝ որպես հանրալեզվաբանական հետազոտության առարկա», «Քաղաքական խոսույթը՝ որպես հաղորդակցման ինստիտուցիոնալ տեսակ», «Գաղափարախոսությունը՝ որպես քաղաքական խոսույթի կարևոր բաղադրիչ»), հենվելով ռուս և արտասահմանյան

լեզվաբանների տարբեր մոտեցումների վրա, փորձել ենք հստակեցնել խոսույթի սահմանումը և տալ քաղաքական խոսույթի հիմնական բնութագիրը:

Ժամանակակից լեզվաբանության մեջ խիստ արդիական է տեքստ-խոսույթ հակադրությունը, ըստ որի տեքստը քննարկում է խոսույթը համատեքստի մեջ:

Տեքստի ըմբռնման հաղորդակցական մոտեցման շրջանակներում ռուս լեզվաբան Կարասիկը հակադրում է իրական հաղորդակցական իրադրության մեջ գտնվող տեքստը, այն է՝ խոսույթը, և այդպիսի իրադրությունից դուրս գտնվող տեքստը:

Ֆրանսիացի լեզվաբան Ժան-Միշել Ադամը, խոսելով խոսույթի մասին, առաջարկում է քննության առնել այն դիմամիկան, որով տեքստային պլանում արտահայտվում են լեզվական միավորները:

Առանձնակի ուշադրության է արժանի խոսույթի ուսումնասիրությունը հաղորդակցական լեզվաբանության տեսանկյունից:

Ժամանակակից հաղորդակցական լեզվաբանության մեջ հատկապես լայն տարածում է ստացել խոսքային ակտերի տեսությունը՝ առաջարկված ու մշակված Դ. Ժ. Սերպագի և Դ. Ժ. Օստինի կողմից, որոնք վերլուծում են խոսքը կյանքի համատեքստում և մարդու կենսագործունեության մեջ՝ ելնելով այն փաստից, որ խոսքերը, ըստ էության, մարդկանց միջև տեղի ունեցող գործողություններ են (Յեգել): Խոսքային ակտում ներկայացված են խոսողը և հասցեատերը, որոնք հանդես են գալիս որպես միմյանց միջև հաստատված, համաձայնեցված սոցիալական դերերի և գործառնությունների կրողներ:

Խոսքային ակտը, որն իր հերթին լեզվական ռեսուրսների ընտրության մշտական գործոն է, դիտվում է որպես հասցեատիրոջ որոշակի հաղորդակցական մտադրությունների իրականացման միջոց: Սա է խոսքային ակտերի տեսության հիմնական առանձնահատկությունը, որը կարող է նպաստել լեզվի կիրարկման մեխանիզմների ուսումնասիրությանը՝ խոսքային փոխազդեցության ընթացքում առաջացած տարբեր նպատակներին հասնելու համար: Ըստ Թ. վան Դեյքի՝ «խոսույթը, բառի ամենալայն իմաստով, լեզվական ձևի, իմաստի և գործողության բարդ միասնություն է, որը լավագույնս կարող է բնութագրվել հաղորդակցական իրադարձություն հասկացության օգնությամբ»: Իր ձևով խոսույթը ոչ միայն իրար հետ կապակցված նախադասությունների հաջորդականություն է, այլ իմաստային միասնություն, որտեղ առկա է իմաստային և տեղեկատվական կապակցվածություն: Օրինակ, ցանկացած ժանրի խոսույթ հասկանալու համար պահանջվում է իրավիճակի գիտակցում, սոցիալական իրազեկություններ և որոշակի մշակութային և այլ տեսակի գիտելիքներ:

Խոսույթի սահմանման հստակեցման համար մեր աշխատանքում մենք հատկապես հիմք ենք ընդունել ռուս լեզվաբան Իլյինի տեքստ/խոսույթ հակադրության մեկնաբանությունը, ըստ որի խոսույթը չի կարող հեղինակ ունենալ. դա է նրա տարբերությունը հեղինակային տեքստից. օրինակ՝ քաղաքական խոսույթում այն միշտ վերաբերում է քաղաքական գործընթացի որոշակի դրվագների: Այսպես, քաղաքա-

կան բանավեճը, որի մասնակիցներից ոմանք ինչ-որ խոսք են արտահայտում այդ համատեղ խոսույթում, ապա ամբողջական խոսույթը, կարծես թե, անկանխատեսելիորեն ստացվում է տարբեր իմաստների համադրումից: Դրանից հետևում է, որ խոսույթը հեղինակների բազմության արտադրանք է, հաճախ կոնֆլիկտային հարաբերություններում գտնվող մարդկանց արտադրանք, այսինքն՝ բոլոր հաղորդակցվող սուբյեկտները համարվում են իրենց միավորող խոսույթների համահեղինակներ:

Խոսույթի հանրալեզվաբանական վերլուծության մեջ լեզվաբանությունը փորձում է հստակեցնել, թե ինչի մասին, ինչի համար և ինչպես է իրականացվում հաղորդակցությունը տարբեր (լեզվական և արտալեզվական) գործոնների ազդեցությամբ, այդ թվում և հաղորդակցման ինստիտուցիոնալ բնութագրերի հաշվառմամբ:

Եթե ելնենք հաղորդակցման դիտավորությունից և ուղղորդվածությունից (ամծ կամ հասարակական ինստիտուտ), լեզվական միջոցների օգտագործման ընդունված և տարածված ձևերից, ապա կարելի է առանձնացնել կենցաղային, գեղարվեստական, լրագրողական, քաղաքական և այլ խոսույթներ:

Այսօր լեզվաբանների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացնում քաղաքական խոսույթի ուսումնասիրությունը: Այս հետաքրքրությունը բացատրվում է ինչպես լեզվաբանական տեսության ներքին պահանջով, որն ուղղված է լեզվական համակարգի գործարկման իրական ոլորտներին, այնպես էլ քաղաքական մտածողության ուսումնասիրության քաղաքագիտական խնդիրներով, հասարակական գիտակցության մեջ դրսևորվող միտումների սահմանման նպատակով քաղաքական տեքստերի վերլուծության մեթոդների մշակման անհրաժեշտությամբ: Կարևոր գործոն է նաև սոցիալական պատվերը, որն ուղղված է քաղաքական հաղորդակցությունը հասարակական գիտակցության մեքենայություններից ազատելուն:

Քաղաքական խոսույթը ոչ միայն խոսք է կամ իրականության նկարագրություն, այլև գործողություն. ասել է թե՛ քաղաքական խոսույթի ընդհանուր իմաստն ու նշանակությունը գոյանում են ասվածի, ինչպես նաև ասվածի հետևանքով տեղի ունեցածի իմաստային բաղադրիչների հիման վրա:

Այսպիսով, քաղաքական խոսույթը չի կարող սահմանափակվել միայն նրանով, թե ինչ է ասված, այլև պետք է անպայման հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները՝ ո՞վ է ասել, ե՞րբ է ասել, որտե՞ղ է ասել և ինչպե՞ս է ասել:

Խոսքն ընդհանրապես և քաղաքական գործչի խոսքը մասնավորապես ազդում է և ազդեցություն է կրում այն հաղորդակցական իրադրությունից, որում տեղի է ունենում: Խոսքի նպատակը, ուստի և ռազմավարությունը տարբերվում են՝ ըստ խոսողի հաղորդակցական մտադրությունների՝ կախված այն բանից, պետք է ուղղակի տեղեկացնե՞լ, գայթակղե՞լ, թե՞ համոզել լսողին, որը կարող է դիտարկվել որպես խոսքային ակտի թիրախ:

խոսույթների տիպերի հնարավոր դասակարգումները կարող են կառուցվել որևէ բաղադրիչային հատկանիշի ընտրության հիման վրա որպես ընդհանրական չափանիշ:

Քաղադրիչային հատկանիշների բազմազանության պայմաններում խոսույթի տիպի սահմանման մեջ որոշիչ դեր է կատարում խոսույթի նպատակը. այսպես՝ քաղաքական խոսույթի բոլոր բաղադրիչները միտված են միակ նպատակի իրականացմանը՝ պայքար իշխանության համար:

Մեր աշխատանքում մենք դիտարկել ենք քաղաքական խոսույթը որպես ինստիտուցիոնալ խոսույթ:

Ինստիտուցիոնալ խոսույթը ներկայացուցչական հաղորդակցություն է, որտեղ գերակայում են դիրքադերային և ոչ թե անձնակողմնորոշիչ իմաստները:

Լեզվի ուսումնասիրությունը՝ որպես սոցիալական երևույթի, անհնար է, եթե հաշվի չառնվեն ինստիտուցիոնալ դիրքերը և դերերը. չէ՞ որ հենց դրանք են ձևավորում անհատին որպես սոցիալական էակի:

Ինստիտուցիոնալ խոսույթի սահմանման համար անհրաժեշտ է հաշվի առնել հաղորդակցության մասնակիցների կարգավիճակադերային հատկանիշները, հաղորդակցության նպատակը (քաղաքական խոսույթում դա կարող է լինել, օրինակ, իշխանության պահպանումը կամ փոխանցումը), հաղորդակցության վայրը:

Քաղաքական խոսույթը դիտելով որպես խոշոր ինստիտուցիոնալ խոսույթ՝ մենք հանդգնում ենք, որ այն տարաբնույթ ոլորտների առնչվող հիմնախնդիրների լայն շրջանակ է պարունակում. քաղաքական գործիչները հաճախ խոսում են, օրինակ, սոցիալական անհավասարությունից, տնտեսական ճգնաժամից, սոցիալական բարեփոխումներից, ինչը նրանցից բազմակողմանի հմտություններ է պահանջում և հանգեցնում է քաղաքական խոսույթի համատեքստում խոսույթի այլ տեսակների և ժանրերի միավորների արտահայտմանը:

Չասարակական ինստիտուտներն ունեն իրենց արժեքային համակարգերը, որոնք իրագործվում են հատուկ գաղափարախոսությունների տեսքով: Ինստիտուցիոնալ խոսույթի նորմերն արտացոլում են սոցիումի էթնիկ արժեքներն ընդհանուր առմամբ, ինչպես նաև տվյալ ինստիտուտը կազմող կոնկրետ հասարակական խմբի արժեքները:

Այսպես օրինակ, քաղաքական խոսույթը, պատկանելով հաղորդակցման ինստիտուցիոնալ տիպին, միևնույն ժամանակ նաև գաղափարախոսական է. նշյալ սոցիալական ոլորտում գաղափարախոսությունը համարվում է քաղաքական խոսույթի համատեքստ, իսկ որպես իդեոլոգեմաներ՝ գաղափարախոսության միավորներ, դիտվում են այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են ազատությունը, հավասարությունը, հանդուրժողականությունը և այլն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԼԵԶՎԱԳՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր աշխատանքի երկրորդ գլխում, որը բաղկացած է երկու բաժնից («Հաղորդակցական վարքագծի լեզվամշակութաբանական առանձնահատկությունները», «Քաղաքական բանավեճի լեզվահաղորդակցական առանձնահատկությունները»), մենք ուսումնասիրել ենք քաղաքական բանավեճը՝ որպես քաղաքական խոսույթի տարատեսակ, և հատկապես հեռուստաբանավեճը, որը լինելով բանավոր քաղաքական երկխոսության տարածված տիպերից մեկը, հնարավորություն է տալիս տեսնելու և ամրագրելու բանավոր խոսքի զարգացման նոր միտումները:

Ուշադրություն դարձնելով բանավեճի սահմանման տարբեր մոտեցումներին, մեր ատենախոսության մեջ «բանավեճ» տերմինը կիրառում ենք լայն իմաստով՝ որպես բանավոր հաղորդակցական մշակույթում ձայնային, գրաֆիկական կամ էլեկտրոնային վերարտադրմամբ գործողություն, ներառված լայն սոցիալական, հոգեբանական, գործնական և այլ համատեքստերում:

«Քաղաքական բանավեճ» սահմանման տակ հասկանում ենք քաղաքական սուբյեկտների բանավոր գործունեություն իրենց ինստիտուցիոնալ հաղորդակցության բնագավառում:

Ըստ Ն. Չոմսկու՝ մարդկանց մտածելակերպը ղեկավարելու միջոցներից մեկը քաղաքական բանավեճ կազմակերպելն է, որն այնպիսի տպավորություն է թողնում, թե իբր ներառում է տարբեր կարծիքներ, բայց իրականում մնում է մեղ սահմանների շրջանակներում: «Եվ մենք ստիպված համոզվում ենք, որ բանավիճող երկու կողմերն ընդունում են որոշ ենթադրություններ, որոնք կազմում են քարոզչության հիմքը» (Chomsky 1987):

Մի շարք գիտնականների կարծիքով՝ քաղաքական բանավեճը դրեևորման երկու հիմնական ձև ունի՝ կոնֆլիկտային և կոնսենսուսային, որոնք իրականում փոխկապակցված են:

Ժ.-Ֆ. Լիոտարը գտնում է, որ արդյունավետ հաղորդակցության մեկնարկային սկզբունքը պետք է լինի ոչ թե կոնսենսուսը, այլ՝ տարակարծությունը: Ըստ նրա՝ ցանկացած իշխանություն ստեղծում է իր խոսքային փորձը, որը ձգտում է համընդհանրության, ճշմարտության և արդարության կարգավիճակի՝ դրանով իսկ իրեն ենթարկելով մյուս խոսքային փորձերը:

Կոնֆլիկտային խոսույթի դաշտում են գտնվում բանավեճերը, երկկողմ քննադատությունները և այլն, իսկ համաձայնության խոսույթին են պատկանում բանակցությունները, կլոր սեղանները, դաշինքները և այլն: Կոնֆլիկտները հակասության բաց ձևեր են, մինչդեռ քաղաքական բանավեճը գործնականում ապահովում է այդ հակասության կողմերի միջև հաղորդակցությունը: 2. Քուլին այդ առումով մշել է. «Որքան շատ ես մտածում, այնքան լավ ես հասկանում, որ կոնֆլիկտն ու համագործակցությունն առանձին տարրեր չեն, այլ և՛ մեկը, և՛ մյուսը ներառող միևնույն գործընթացի փուլեր» (Cooley 1998: 38):

Քաղաքական բանավեճերը, կլոր սեղանները և այլն, բացի փաստացիորեն քաղաքական հաղորդակցությանն դրսևորման օրինակներ լինելուց, նաև կարևոր միջոցներ են, որոնք գործի է դնում քաղաքական գործիչը իր նպատակին հասնելու համար:

Ինստիտուցիոնալ խոսույթի ժանր համարվող քաղաքական խոսույթում մեծ նշանակություն է տրվում երկխոսության տարբերակմանը՝ ըստ քննարկվող թեմաների: Քաղաքական երկխոսությունը՝ որպես ինստիտուցիոնալ շփման տարատեսակ, օբյեկտիվորեն առանձնացվում է սահմանված հետևյալ հատկանիշների հիման վրա՝ թեմատիկ սահմանումներ, բառապաշարային-դարձվածաբանական միավորներ, կառուցվածքային-իմաստային կապակցություն, նպատակային դրույթներ և հաղորդակցական մարտավարություններ, շփման մասնակիցների դիրքային և դերային բնութագրություններ, փաստարկման տեսակներ:

Վերջին տասնամյակում լեզվաբանության առարկա են դարձել այսպես կոչված զանգվածային հաղորդակցության բանավոր ձևերը (ռադիոյի և հեռուստատեսության բանավոր խոսքը):

Մեր հետազոտական նպատակներից ելնելով՝ մենք դիտարկել ենք քաղաքական հեռուստաբանավեճը, որի ուսումնասիրությունը, մեր կարծիքով, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում:

Հեռուստաբանավեճը երկխոսություն է, որը տեղի է ունենում լրագրողի՝ տեղեկատվություն ստացողի և տեղեկատվություն կրողի կամ ուղարկողի միջև: Այս դեպքում լրագրողը հարցերի օգնությամբ ձգտում է այն կազմակերպել այնպես, որ բանավեճ-հարցազրույցի մասնակիցները կարողանան լիարժեք և տրամաբանորեն բացահայտել թեման: Հեռուստաբանավեճը քաղաքական երկխոսության դրսևորման ինքնատիպ ձևերից է, որը որպես կանոն ներկայացնում է փաստեր՝ համեմված մեկնաբանություններով: Հաճախ քաղաքական գործչի բանավեճային հարցազրույցին տրված օբյեկտիվ մեկնաբանությունների օգնությամբ հնարավոր է դառնում կառուցել այդ գործչի, երբեմն նաև՝ նրա ներկայացրած քաղաքական ուժի դիմանկարը:

Ատենախոսության մեջ առաջադրված նպատակների իրագործման և խնդիրների լուծման համար մենք դիտարկել ենք այնպիսի մշակութային արժեքներ, որոնք մարդկանց փոխըմբռնման և գոյակցության համար խիստ կարևոր սկզբունքներ են: Դրանց թվին են պատկանում ազգային սովորույթները, բարքերը, կարծրատիպերը, վարքի կանոնները, գնահատականները, իդեալները: Այս սկզբունքների հիման վրա ստեղծվում են վարքի որոշակի կանոններ, որոնք կարգավորում են հասարակության մեջ մարդու կյանքը: Լեզվամշակութաբանական տեսանկյունից խոսելով արժեքային համակարգի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ չի կարող տվյալ լեզվով խոսող բոլոր մարդկանց համար լինել մեկ միասնական, բոլոր մասերով համընկնող հոգևոր արժեքների հիերարխիա: Գոյություն ունեն գերիշխող արժեքային կողմնորոշիչներ, որոնք իրենց հերթին պայմանավորված են «ազգային-մշակութային» ավանդույթներով և

հասարակության մեջ իշխող գաղափարախոսությամբ»: Մյուս կողմից՝ գոյություն ունեն որոշակի արժեքներ, որոնք բնորոշ են յուրաքանչյուր հանրույթի՝ անկախ ազգային պատկանելությունից՝ ճշմարտություն, բարություն, գեղեցկություն, արդարություն, աշխատասիրություն և այլն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԵՃԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության երրորդ գլուխը, որը բաղկացած է երեք բաժնից («Քաղաքական հեռուստաբանավեճի բնորոշ հատկանիշները հայկական հաղորդակցական մշակույթում», «Քաղաքական հեռուստաբանավեճի բնորոշ հատկանիշները ամերիկյան հաղորդակցական մշակույթում», «Քաղաքական հեռուստաբանավեճի հիմնական համեմատական բնութագիրը հայկական և ամերիկյան հաղորդակցական մշակույթներում») ներկայացնում է քաղաքական բանավեճի լեզվամշակույթի ազգային առանձնահատկությունների ուսումնասիրությունը, որոնց արդյունքում դուրս են բերվել հաղորդակցական վարքագծի ազգային յուրահատկությունները հայ և ամերիկյան հաղորդակցական մշակույթներում: Կատարված վերլուծությունները մեզ հնարավորություն են ընձեռել ներկայացնելու հաղորդակցական վարքագծի համեմատական նկարագրությունը:

Չարկ է մշել, որ փաստերի համակարգումը, որը վերաբերում է հաղորդակցման ազգային առանձնահատկություններին, գործնականում այնքան էլ հեշտ գործ չի համարվում, քանի որ նմանատիպ նկարագրությունների գիտական ավանդույթները, նկարագրման տերմինաբանական ապարատը, ուսումնասիրման մեթոդները ամբողջապես մշակված չեն:

Չաղորդակցական վարքագծի նկարագրման համար կարևորվում են երկու հիմնական հայեցակերպեր՝ կազմակերպակառուցվածքային և լեզվահաղորդակցական: Կազմակերպակառուցվածքային հայեցակետն արտացոլում է հարցազրույցի՝ մեր պայքում հեռուստաբանավեճի, որպես ժանրի կառուցվածքային առանձնահատկությունները: Ատենախոսության հետազոտական հետաքրքրություններից ելնելով հեռուստաբանավեճում հաղորդակցական վարքագծի նկարագրման համար մենք ներկայացրել ենք կաղապար, որն ունի հետևյալ տեսքը՝ գործոն, բնութագրիչ, ենթաբնութագրիչ և հատկանիշ, որտեղ առաջնայինը հաղորդակցական վարքագծի (հաղորդակցական գործունեություն կամ փաստ) հատկանիշն է: Չաղորդակցական վարքագծի բնութագրիչը միասեռ, միատեսակ հաղորդակցական հատկանիշների ամբողջությունն է, որը բնութագրում է ժողովրդի հաղորդակցական վարքագիծը: Գործոնը նմանատիպ հաղորդակցական չափերի (պարամետրերի) ամբողջություն է:

Ուսումնասիրությունն իրականացվել է հայկական հեռուստատեսային և էլեկտրոնային հեռուստաընկերությունների (ՀԸ) հաղորդումների քաղաքական հեռուստաբանավեճերի նյութերի հիման վրա: Դրանք են՝ ՀՀ ՀԸ (Զրույց, Չարցազրույց), Արմնյուս ՀԸ (Բրիֆինգ,

Բանաձև), Կենտրոն ՅԸ (Ուրվագիծ, Հայկական Ուրբաթ), Արմենիա ՅԸ (Ռ-Էվոլյուցիա), Երկիր մեդիա ՅԸ (Երկրի հարց), ԱՐ ՅԸ (Ճանապարհ), 1am էլեկտրոնային հեռուստատեսություն (Դիսկուրս, Ռեալ Պոլիտիկ), Ա1պլյուս էլեկտրոնային ՅԸ (Պոստ սկրիպտում):

Աշխատանքում բերված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերը տեղեկատվական բանավեճեր են՝ անձնային տարրերի շատ քիչ ներգրավմամբ:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճերը նույնպես տեղեկատվական են, բայց պարտադիր կարգով՝ տաղավարի հյուրի հնարավորինս շատ անձնային տվյալների և տեղեկությունների ներկայացմամբ:

Օրինակ՝

«Ա1պլյուս» հեռուստաընկերության լրագրող Ա.Աբրահամյանի հեղինակային «Պոստ սկրիպտում պլյուս» հաղորդաշարում (Եթեր՝ 30.12.2012) տեսանյութի օգտագործմամբ՝ *«Արմեն Մարտիրոսյան, ծնվել է 1973, Երևանում: 1991թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մենամարտության ֆակուլտետը, ծյուղոյի մարզիչ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, մակավարժական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս: Մինչև պատգամավոր դառնալը աշխատել է նույն ինստիտուտում որպես դասախոս, 2005թ. մայիսի 12-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ցուցակով «Ժառանգություն» կուսակցության կողմից...»:*

Վերոնշյալից հետևում է, որ հայկական մշակույթում և հաղորդակցության մեջ անձնային տեղեկատվությունը նշանակալի է, քանի որ հայ հանդիսատեսը ստացված տեղեկատվությունը գնահատում է այն ներկայացնողի անձնային հատկանիշներով, քան բովանդակային խորքայնությամբ:

Լեզվի և քաղաքականության կապը հիմք է տալիս դիտելու քաղաքական հաղորդակցությունը որպես յուրահատուկ լեզվամշակութային համակարգ, որը առանձնահատուկ գիտական հետաքրքրության ոլորտ է ներկայացնում:

Հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի տեսակի (փաստ-տեղեկատվություն, նկարագրություն և կարծիք-բանավեճ) վերլուծության հիման վրա արվել է եզրակացություն, որ՝

- փաստ-տեղեկատվության ոչ մեծ քանակություն է պարունակում հայկական քաղաքական հեռուստաբանավեճը,
- կարծիքը առավել լայն է ներկայացված ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճում,
- ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճում հյուրերի նկարագրական բնութագրությունները համարյա բացակայում են:
- հայկական քաղաքական հեռուստաբանավեճերում հեռուստադիտող լսարանը պահանջ ունի վերլուծելու երկրի ներքին քաղաքականությունը գործունեության բոլոր ոլորտներում,

- ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերում հեռուստադիտող լսարանը պահանջ ուի վերլուծելու պետության արտաքին քաղաքականությունը, դրանցից բխող վտանգները:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճը հիմնականում բազմաթեմատիկ է՝ մեկ հեռուստաբանավեճում մինչև 6 թեմայի զարգացմամբ: Ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերը մենաթեմատիկ են՝ մեկ գլխավոր թեմա՝ մի քանի ենթաթեմաների զարգացմամբ:

Հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերը ընթանում են բնական գրույցի տեսքով, հայկականը՝ հայի հաղորդակցական վարքագծին բնորոշ միանգամից մի քանի ուղղություններով, ամերիկյանը՝ զարգացման ուղիղ գծով, քանի որ հաղորդակցումը մի քանի թեմատիկ գծերով բնորոշ չէ ամերիկյան վարքագիծին:

Հայկական և ամերիկյան հեռուստաբանավեճերի նպատակային ուղղվածության գերակայություններն են տեղեկատվությունը և մեկնաբանությունը:

Հայկական հեռուստաբանավեճի առանձնահատկությունն է գովեստը, գովազդը, հանրության ուշադրությանն արժանանալու միտվածությունը, որը նաև ազգային քաղաքական մշակույթի ընդհանրական դրսևորում է:

Վերլուծել ենք նաև հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի ընթացքում կիրառվող մենախոսական խոսքային գործողության տեսակների տարբեր համամասնությունները:

Երկու մշակույթներում էլ հեռուստաբանավեճերի մենախոսական խոսքային գործողությունների ամենատարածված տեսակը կարծիքն են և մեկնաբանությունը, նրանց հետևում է պատումը: Վկայությունը մենախոսական խոսքային գործողության քիչ կիրառվող տեսակն է:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճին բնորոշ է տաղավարի հյուրի ասածի վերաբերյալ լրագրողական պարտադիր մեկնաբանությունը, և/կամ սեփական կարծիքի հակադրումը:

Օրինակ («Երկիր Մեդիա» ՀԸ «Երկրի հարցը», Լրագրող՝ Արթուր Կիրակոսյան, բանավեճ Լ.Զուրաբյանի հետ)՝

Արման Մոսինյանի հետ որ գրուցում էինք, նա վստահություն հայտնեց, որ իշխանությունը կկատարի երեք պայմանները և երկխոսությունը տեղի կունենա: Հիմա այս երեք պահանջները կատարվեցին, երկխոսության ընթացքում, ինչպիսի՞ն է Ձեր վստահությունը, որ տեղի կունենան արտահերթ նախագահական կամ խորհրդարանական ընտրություններ:

Ամերիկյան լրագրողները սեփական տեսակետի արտահայտումը հնչեցնում են հարցի ձևակերպման մեջ:

Տեքստակազմիչ գործոնների տեսանկյունից հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք տարբերվում են տեքստի ծավալով՝ ըստ բառօգտագործման քանակի և հնչման տևողության: Հայկական քաղաքական հեռուստաբանավեճը մեծ է տեքստի ծավալով, որի բառ-

օգտագործման քանակը կազմում է 2000-3500 բառ, հնչման տևողությունը՝ ռոպեուն 100-130 բառ:

Ամերիկյան հեռուստաբանավեճին բնորոշ են ոչ մեծ ծավալի տեքստերը: Բառօգտագործման քանակը կազմում է 1300-1800 բառ, հնչման տևողությունը՝ ռոպեուն 120-150 բառ:

Հայ հեռուստալրագրողի խոսքային ներդրման ծավալը մեկ ու կես անգամ քիչ է տաղավարի հյուրի խոսքային ներդրման ծավալից, իսկ ամերիկյան հեռուստալրագրողի խոսքային ներդրման ծավալը՝ երկու անգամ:

Երկու ժողովուրդների հաղորդակցական մշակույթների համեմատությունը ցույց է տալիս, որ հայկական հեռուստալրագրողների խոսքային մասնակցությունը շատ ավելի մեծ է, քան ամերիկյան հեռուստալրագրողներինը:

Հայ հեռուստալրագրողի և տաղավարի հյուրի համար բնորոշ է սեփական խոսքի հակիրճությունը, այստեղ նկատվում է խոսքի ծավալունության ձգտում:

Կառուցվածքի ամբողջականության տեսանկյունից հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

Ամերիկյանը աչքի է ընկնում կուռ կառուցվածքով, այն նախապես մանրամասն պլանավորված է, քանի որ ամերիկյան հեռուստալրագրողները գիտեն, թե երբ և ինչ հարց են առաջադրելու:

Հայկականին, ընդհակառակը, բնորոշ է կառուցվածքային տարբեր մասերի ոչ լիարժեքությունը, երբ հեռուստալրագրողը հարցազրույցի ընթացքում կարող է շեղվել բանավեճային ստանդարտներից՝ դրանով ստեղծելով իր սեփական իմիջը և բևեռելով ուշադրությունը իր անձի վրա: Սա ևս հայկական հաղորդակցական մշակույթի տիպիկ ազգային առանձնահատկություններից է:

Թեմայի ներկայացումը հայկական քաղաքական հեռուստաբանավեճի պարտադիր բաղադրիչը չէ, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, հայկական հեռուստաբանավեճը մենաթեմատիկ չէ, այն հաճախ չի համընկնում գլխավոր թեմայի հետ, բացակայում է թեմատիկ զարգացումը, ինտրիգը կիրառվում է հեռուստադիտողների ուշադրությունը գրավելու համար:

Օրինակ («Կենտրոն» ՀՐ «Ուրվագիծ» հաղորդաշար, հեռուստաբանավեճ Դավիթ Հակոբյանի հետ)

Լ. – Պարոն Հակոբյան, Դուք մեր հասարակության մեջ ընկալվում եք մարդ, որը հավատարիմ և մարքսիզմի գաղափարներին, իսկ մեր քաղաքական դաշտը էնքան ապագադափարականացված և, ռեալ մարդիկ կրվում են փողի, աթոռի, իշխանության համար: Էլ չեն ասում՝ էնպիսի գաղափարախոսություն ինչպիսին մարքսիզմն և, կարելի և ասել՝ դուք էսօր «Աղինոկի վուլկ եք», մնացել եք մենակ, ըստ էության որպես մարքսիստ ու մարքսիզմի տարածող՝ Դուք ակտուալ չեք:

Դրան հակառակ՝ թեմայի ներկայացումը ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի պարտադիր բաղադրիչն է, անպայման ապահովված է թեմատիկ զարգացումը, որն էլ իր հերթին թույլ է տալիս

կատարելու անհրաժեշտ շեշտադրումներ հեռուստադիտողների ուշադրությունը գրավելու համար: Հայկական հեռուստաբանավեճի համար պարտադիր պայման է հաղորդումը սկսել լրագրողի կողմից տաղավարի հյուրի և իր անձի ներկայացմամբ: Ամերիկյան եթերում, որպես կանոն, հնչում է միայն տաղավարի հյուրի անունը (տրվում է շատ կարճ տեղեկությ). լրագրողի անունը սովորաբար չի հնչում:

Հիմնական մասում բանավիճային թեմայի զարգացումը հայկական և ամերիկյան հեռուստաեթերում ունի տարբերություններ: Թեմայից շեղումը հայկական հեռուստաբանավեճին խիստ հատկանշական է:

Արդյունքների ամփոփումը հիմնականում առկա է հայկական քաղաքական հեռուստաբանավեճերում, ամերիկյանում՝ արդյունքների ամփոփումը արվում է ծայրահեղ հազվադեպ:

Հեռուստաբանավեճում որպես կառուցվածքային հիմնական միավոր հանդես է գալիս լրագրողի և տաղավարի հյուրի փոխկապակցված ռեպլիկը՝ երկխոսական միավորը (ԵՄ):

Վերլուծությունը մեզ թույլ է տալիս արձանագրել, որ հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերը ներկայացված են ԵՄ հետևյալ տարատեսակներով՝ «պատում – պատում», «հարց ու պատասխան», «պատում և հարց – պատում», «հարց և պատում – պատում»: Ըստ թեմատիկ զարգացման՝ երկխոսական միասնությունները ներկայացված են հետևյալ համակցություններով. կարճ հարց – կարճ պատասխան, կարճ հարց – ծավալուն պատասխան, ծավալուն հարց – կարճ պատասխան, ծավալուն հարց – ծավալուն պատասխան:

Ընդհանուր առմամբ՝ հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերում առավել հաճախ կիրառվող ԵՄ-ն երկու հաղորդակցական մշակույթներում էլ նույնն է՝ «պատում – պատում»-ը, առավել հազվադեպ՝ «հարց և պատում – պատում» և «պատում և դրդապատճառ – պատում» կառուցվածքները: Հայկական հեռուստաբանավեճում դիտարկվում են «հարց – հարց և պատում», «պատում և դրդապատճառ – պատում» ԵՄ-ների կիրառման դեպքեր, որոնք քիչ են բնորոշ ամերիկյան հեռուստաբանավեճերին:

«Ծավալուն – կարճ» ցուցիչները հնարավորություն են տալիս որոշելու հեռուստաբանավեճի երկխոսության մակարդակը: Ավելի քիչ երկխոսական է ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճը, որտեղ հաճախ հանդիպում է «ծավալուն հարց – ծավալուն պատասխան» տարբերակը, այն դեպքում, երբ հայկական հեռուստաբանավեճին հատուկ է «հարց ու պատասխան» տարբերակը: Սա ևս հայկական հաղորդակցական մշակույթի առանձնահատուկ գիծ է, երբ հեռուստալրագրողի մշտական միջամտությունը զրույցին թույլ է տալիս այն դարձնել երկխոսական և առավել բանավիճային:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճում տաղավարի հյուրի ամենաընդլայնված պատասխանը ներառում է մինչև 320 բառօտագործում:

Հայկական լրագրողի համար՝ 188 բառօտագործում:

Ամերիկյան քաղաքական հեռուստամշակույթին բնորոշ է տաղավարի հյուրի առանձին խոշոր պատում ռեպլիկների կիրառումը: Տաղավարի հյուրի ամենածավալուն ռեպլիկը 480 բառօգտագործում է: Ամերիկյան հեռուստալրագրողի բառօգտագործման առավելագույն քանակը կազմում է 95:

Վերլուծական այս համեմատությունը ցույց է տալիս հայկական քաղաքական բանավեճում բանավիճող կողմերի արտահայտված ձգտումը՝ շփման մեջ հասնելու գերակայության:

Հեռուստաբանավեճերում հնչող հարցերի տեսակների հստակեցումը հնարավորություն է տալիս բնութագրել բանավիճողների հաղորդակցության բնույթը: Ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճում ուղիղ, երկբևեռ, ուղղորդող հարցերի կիրառումը հարցազրույցը դարձնում է առավել պաշտոնական և կոռկառուցվածքային՝ դրանով իսկ ընդգծելով առավել հանդուժողական, մեկմեկու հանդեպ հարգալից լինելու մշակութային առանձնահատկությունը:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճին բնորոշ են երկբևեռ, սադրիչ, հետազոտող հարցերը, որոնք բանավեճին ավելի քիչ պաշտոնականություն են հաղորդում:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճում առանձնահատուկ ուշադրության է արժանի հայելային/անդրադարձող և սադրիչ հարցերի կիրառումը: Հայելային հարցը պահպանում է բանավեճի տեմպը, իսկ սադրիչ հարցը այն դարձնում կոմֆլիկտային: Հայ հեռուստալրագրողը այս հարցերով ստեղծում է շփման «սուր անկյուններ»՝ հաղորդելով բանավեճին առավել թեժություն:

Քաղաքական հեռուստաբանավեճի լեզվամշակութայնության բնութագրման համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում տարբեր հաղորդակցական մշակույթներում լեզվական առանձնահատկությունների, հաղորդակցական ոճի, վարքագծի բնորոշ նկարագրությունը և զուգադրումը:

Բոլոր հաղորդակցական մշակույթներում էլ հեռուստաբանավեճի պաշտոնականության մակարդակը որոշվում է նրա թեմայով, շփման ոճով, հաղորդակցության ընթացքում վարվելակերպի կանոնների ձևերով ու պահպանմամբ, երկխոսության զգացական երանգավորմամբ, բանավիճողների ոչ խոսքային վարքագծով, մասնակիցների քանակով, նրանց արտաքին տեսքով (դրես կող):

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճի թեմատիկան սերտորեն կապված է Հայաստանում հասարակական-քաղաքական կյանքի հետ, ուղղակիորեն կապված է ներքին քաղաքական և տնտեսական հարցերի քննարկման հետ, որն էլ շփման պաշտոնական բնույթի կարևոր պայմաններից մեկն է: Սակայն հայկական քաղաքական հեռուստաբանավեճը անպայմանորեն ունի անձնային տեղեկատվական երանգավորում, ուղեկցվում է տաղավարի հյուրի բնութագրի նկարագրությամբ, որը այն դարձնում է ոչ այնքան պաշտոնական, ազդում շփման ձևի վրա, դարձնում առավել խոսակցական:

Չայ հեռուստալրագրողի ռեպլիկներում հաճախ հեզմանք է հնչում, առկա են կատակային ռեպլիկները: Լրագրողների կողմից թույլ են տրվում վարվեցողության կանոնների խախտումներ, որոնք և խոսում են հեռուստաբանավեճերի ցածր ոճի մասին:

Ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի թեման սերտորեն կապված է ողջ աշխարհի հասարակական-քաղաքական կյանքի հետ, ուղիղ կապ ունի համաշխարհային և ներքին քաղաքական իրավիճակի ընդհանուր և մասնավոր հարցերի քննարկման կամ լուծման ուղիների որոնման հետ, այսինքն՝ թեման ամբողջությամբ համապատասխանում է շփման պաշտոնական բնույթին: Այն չունի անձնային տեղեկատվական երանգավորում, և դա նպաստում է նրա առավել պաշտոնականությանը:

Քաղաքական հեռուստաբանավեճի լեզվամշակութայնության մասին է խոսում մաս նրանց խոսքային գործունեության՝ խոսքի բառային կազմի ու ռեպլիկների խոսքի մասերի բնութագրությունը: Խոսքի նախապատրաստված կամ ինքնաբուխ լինելու աստիճանը, (այսինքն, թե որքանով է այն գրավոր կամ բանավոր), կարելի է պարզել տեքստերում գոյականների, ածականների, դերանունների և այլ խոսքի մասերի կիրառության վերլուծության միջոցով:

Չայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերում ամենակիրառելին գոյականն է, լրագրողների և տաղավարի հյուրերի խոսքի գոյականության ցուցանիշը ցույց է տալիս, որ լրագրողների խոսքն ընդհանուր առմամբ ավելի բազմաբնույթ է և քիչ ինքնաբուխ, քան տաղավարի հյուրերինը, փաստորեն ավելի նախապատրաստված է, կազմով ավելի մոտ գրավորին:

Ածականության ցուցանիշի մեծությունը ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճում վկայում է քաղաքական հեռուստալրագրողների խոսքի առավել մեծ նախապատրաստվածության մասին հայ հեռուստալրագրողների խոսքի հետ համեմատած, չնայած ցուցանիշային տարբերությունը մեծ չէ:

Դերանվանական ցուցանիշը բավականին բարձր է հայ հեռուստալրագրողի և տաղավարի հյուրի խոսքում: Դա հաստատում է մեր հետևությունը առ այն, որ հայկական լրագրողները և տաղավարի հյուրերը վարում են կենդանի բանավեճ՝ առանց նախապատրաստված պատասխանների:

Չայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի տեքստերում բառապաշարի իրացման որոշ ոճական բնութագրիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է որոշակի համընկում: Չամագործածական բառապաշարի կիրառումը երկու հեռուստաբանավեճերում էլ ամենաբարձրն է բառօգտագործման ընդհանուր քանակի մեջ:

Ամերիկյան քաղաքական լրագրողները օգտագործում են քաղաքագիտական բառապաշար, լայնորեն գործածում են քաղաքական տերմինաբանությունը:

Ամերիկյան հեռուստալրագրողների խոսքում բավական լայն են

ներկայացված կաղապարային արտահայտությունները, ավելի հազվադեպ են կիրառվում դարձվածքները:

Տաղավարի հյուրերը իրենց հերթին լայնորեն օգտագործում են գիտական, մասնագիտական քաղաքական բառապաշար, հատուկ տերմինաբանություն, ավելի հազվադեպ են կիրառում խոսակցական բառապաշար, բացառված է հասարակաբանականը:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճում հիմնականում օգտագործվում է համագործածական բառապաշար: Նման բառապաշարի տոկոսը տաղավարի հյուրի խոսքում ավելի բարձր է, քան լրագրողի խոսքում: Հայկական քաղաքական հեռուստաբանավեճում լրագրողը և տաղավարի հյուրը գործածում են քաղաքական տերմիններ, հատուկ բառապաշար:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճում հաճախակի է հանդիպում խոսակցական բառապաշարը, հիմնականում, ի տարբերություն լրագրողի, տաղավարի հյուրը օգտվում է խոսակցական լեզվից ու դարձվածքներից, բայց հազվադեպ է դիմում համագիտական բառապաշարին: Հասարակաբանական բառապաշարի կիրառումը հանդիպում է Պ.Ղազարյանի խոսքում՝ «Հայկական ուրբաթ» և «Ուրվագիծ» հաղորդումների ընթացքում:

Հայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերի տեքստերը տարբերվում են կիրառվող նախադասությունների տեսակների բազմազանությամբ, որոնք ունեն տարբեր կառուցվածք և նշանակություն:

Հայկական և ամերիկյան հաղորդակցական մշակույթներում լիակազմ նախադասությունների թիվը էականորեն գերազանցում է թերի նախադասություններին ինչպես լրագրողի, այնպես էլ տաղավարի հյուրի խոսքում: Թերի նախադասությունների կիրառումը հայկական քաղաքական մշակույթում պայմանավորված է իրավիճակով (սադրանքով, լրացուցիչ տոնանությամբ, դիմախաղով, այսինքն՝ այն ամենով, ինչով հնարավոր է խնայել լեզվական միջոցները՝ առանց վնասելու արտահայտված մտքի ընկալմանը), թերի նախադասություն-պատասխանները՝ պայմանավորված են հարցի բովանդակությամբ և ձևով:

Օրինակ («Կենտրոն» ՀԸ «Ուրվագիծ» հաղորդաշար, բանավիճողներ՝ Խ.Հարությունյան, Մ.Մելքոնյան)՝

Տ.Հ.- Տարվող քաղաքականությունը անբավարար է գյուղատնտեսության ոլորտում ... միտումը բավարար չի, հիվանդը մահանում է:

Թերի նախադասությունների նկատելի մասը լրագրողների կողմից հարցազրույցի ընթացքում կիրառվող ընդհատումների արդյունք է:

Օրինակ («Արմնյուս» ՀԸ «Բանաձև» հաղորդաշար, լրագրող՝ Արտակ Ալեքսանյան, բանավեճ Նիկոլ Փաշինյանի հետ)՝

Լ.- ... պիտակավորում՝ ավագակապետ, վեհապառ ... ընդհանրապես ՀԱԿ-ի բառապաշարում շատ են թաթար-մոնղոլական հորդաներ: Ինչի՞ ախրսան:

Լիակազմ և թերի նախադասությունների տարբերությունը բխում է հիմնականում նախադասությունների կառուցվածքային սխեմայից (ենցիոնալ-գնահատող, հաստատական, ժխտական, խթանող, հարցական, խոսակցական բառեր, դիմելածներ, հղումներ):

Օրինակ («Կենտրոն» ՀԸ «Ուրվագիծ» հաղորդաշար)

Լ.- *Դուք ասում եք ընտրվել գնացել ա, չի՞ ընտրվել, չի՞ գնացել* (ենցիոնալ գնահատողական)

Լ.- *Ես Ձեզ հետ համաձայն եմ, կամ աղքատներ և շատ վատ ապրող մարդիկ* (գնահատողական և հաստատական):

Լ.- *Ինչու պետք է ընտրողները քեզ ընտրեն* (խոսակցական դիմելած):

Ամերիկյան հեռուստալրագրողների կողմից խոսքի ընդհատումները ավելի քիչ են արձանագրված, սրանց վերաբերմունքում զգացվում է ընդգծված հարգանք հյուրի նկատմամբ, ուստի և պահելով քաղաքավարության նորմերը՝ թույլ են տալիս հյուրին լիարժեք արտահայտվելու:

Ամերիկյան լրագրողները նախընտրում են պարզ նախադասությունները, այնինչ տաղավարի հյուրերի խոսքում գերազանցում են բարդ նախադասությունները:

Չայկական լրագրողները և տաղավարի հյուրերը առավել հաճախ խոսքում օգտագործում են պարզ ընդարձակ նախադասություններ:

Չայկական և ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերում մեջբերվող խոսքը որպես շարահյուսական հնար կիրառվում է, լրագրողները մեջբերում են թերթերի հրատարակություններից, նախորդ հյուրերի հայտարարություններից, որոնց նպատակն է հաստատել բանավեճի ընթացքում արտահայտված տեսակետները:

Նախապես պատրաստված մեջբերումները նաև օգնում են լրագրողին բանավեճը վարել հարցազույցի նպատակներին համապատասխան:

Չայկական հեռուստաբանավեճի լրագրողներն ու հյուրերը մեջբերումների միջոցով քննադատում են, մերկացնում ընդդիմադիր կուսակցությունների, պետական այրերի քայլերը և շատ հազվադեպ են օգտագործում մեկնաբանելու նպատակով:

Ամերիկյան հեռուստաբանավեճի հյուրերը մեջբերումների միջոցով մեկնաբանում են որոշակի օրենսդրական ակտեր, վիճակագրական տվյալներ՝ կիրառելով անուղղակի խոսք:

Շարահյուսական վերլուծություններով բացահայտել ենք նաև նմանություններ հայկական և ամերիկյան հաղորդակցական մշակույթներում: Երկու մշակույթների բանավոր տեքստերում արձանագրվում են նախադասությունների շարահյուսական կառուցվածքների կրկնություններ, որոնց նպատակն է խոսքին հուզական-արտահայտչական երանգավորում տալ, խոսքը դարձնել առավել համոզիչ և կենդանի: Սակայն այս պարագայում, եթե ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճում հուզական-արտահայտչական երանգավորումը ծառայում է սեփական երկրի

ժողովրդավարական դրսևորումները առավել երանգավորելու համար, ապա հայկականում այն գրեթե հակառակ նպատակին է ծառայեցվում:

Հայկական քաղաքական հեռուստաբանավեճում ոճական հնարներից առավել շատ կիրառվում են չափազանցումը, մեղմատությունը, հեզմանքը, համեմատությունը, կրկնությունը, քիչ են հանդիպում փոխաբերության, համանունության հնարները:

Օրինակ («Ա1+» ՀԸ, լրագրող՝ Ա.Աբրահամյան, բանավեճ Արամ Սարգսյանի հետ)՝

Տ.Հ.- ...Ընդդիմություն են համարում բոլոր նրանց, ովքեր մարտի 1-ից հետո չեն խրախուսել գործող իշխանությանը, չեն վերցրել պորտֆելներ և իշխանության մաս կազմել...: (մեղմատություն)

Տ.Հ.- Ամերիկայի նման ժողովրդավարական երկրում, երբ որ դեսպանը ցեղասպանություն բռնն ասաց, աշխատանքից հանեցին մարդուն: Սեր ամերիկայի դեսպանը: Ես մարդիկ եկան ինձ ասին, որ ուզում ենք այս հայտարարությունն անել նախարարության անունից, ես ասի՜ չէ: Իրենք իմ ետևից գնացին արեցին և աշխատանքից հեռացվեցին: (համեմատություն)

Հարկ է նշել, որ ոճական այս հնարների օգտագործումը հայկական քաղաքական հաղորդակցման մշակույթում խիստ ամհատական բնույթ է կրում, կան քաղաքական գործիչներ, որոնց խոսքը սկզբից մինչև վերջ համեմված է փոխաբերություններով, այլաբանական պատմություններով, և նրանց խոսքին հատուկ է պաթետիկ ոճը: Այս բնորոշիչները վկայում են խոսողի զարգացվածության աստիճանը, բարձր տեղեկացվածությունը և մշակութային խոր գիտելիքները:

Ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճում ամենատարածված և հաճախակի կիրառվող ոճական հնարներից են կրկնությունները՝ նույնասկիբը (anaphora), կցուրդը (epanalepsis), զուգապատկությունը/զուգադրությունը (anadiplosis), մասնատումը (parceling), բառախաղը, որը դժվարին բանավեճային քննարկումներում նպաստում է լարվածության թուլացմանը, խոսքի բազմազանացմանը:

Ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերում կարևորվում է հատկապես փոխաբերությունների կիրառումը՝ քաղաքական խոսքում մեկ իրականությունից մյուսին անցում անելու համար:

Ամերիկյան քաղաքական հեռուստաբանավեճերում լրագրողների և տաղավարի հյուրերի կողմից ոճական բազմաբնույթ հնարների կիրառումը գործնական արդյունքն է այն լեզվաբանական, քաղաքագիտական և հոգեբանական հետազոտությունների, որոնք ուղղված են ամերիկյան քաղաքական խոսքի ազդեցության բարձրացմանը, հեռուստալսարանի կողմից անհրաժեշտ գնահատականի ձեռքբերմանը:

Ատենախոսության **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ** ամփոփված են հետևյալ կետերում.

1. XXI դարի սկզբին խոսույթի հանրալեզվաբանական վերլուծության մեջ լեզվաբանությունը փորձում է հստակեցնել, թե ինչի մասին, ինչի համար և ինչպես է իրականացվում

հաղորդակցությունը տարբեր (լեզվական և արտալեզվական) գործոնների ազդեցությամբ, այդ թվում և հաղորդակցման ինստիտուցիոնալ բնութագրերի հաշվառմամբ:

2. Սոցիալ-գործաբանական մոտեցման տեսանկյունից խոսույթը՝ որպես հաղորդակցական երևույթ, մի կողմից դիտարկվում է որպես բանավոր հաղորդակցման և խոսքի միջև միջանկյալ դիրք գրավող գործունեություն, մյուս կողմից՝ հաղորդակցման ընթացքում արձանագրված բանավոր տեքստ:

3. Խոսույթը գործընթաց է, որը վերաբերում է ակտուալ խոսքային գործողությանը և դիտարկվում է որպես ժամանակային և իրավիճակային սահմանափակ հարաբերություններում գտնվող մարդկանց արտադրանք (ուստի և չունի հեղինակ):

4. Խոսույթը քաղաքականության մեջ միայն խոսքային ակտ չէ. այն չի հանգում ո՛չ տեքստին, ո՛չ էլ խոսքային գործունեությանը. այն ընդգրկում է անհատի ողջ նշանային գործունեությունը. այլ կերպ ասած, խոսելով քաղաքական խոսույթի մասին, անհրաժեշտ է ուսումնասիրության ենթարկել ոչ միայն այն, ինչ ասում է գործիչը, այլև թե ինչ պայմաններում է ասում, ինչպես է ասում և այլն:

5. Քաղաքական խոսույթը՝ որպես բարդ հաղորդակցական կառուցվածք, պատկանում է խոսույթի տարբեր տիպերին (ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ), որի հետևանքով օժտված է բազմապլան բնութագրերի յուրահատուկ կազմով:

6. Քաղաքական խոսույթը, պատկանելով հաղորդակցման ինստիտուցիոնալ տիպին, միևնույն ժամանակ նաև գաղափարախոսական է: Նշյալ սոցիալական ոլորտում գաղափարախոսությունը համարվում է քաղաքական խոսույթի համատեքստ, իսկ որպես իդեոլոգեմաներ՝ գաղափարախոսության միավորներ, դիտվում են այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են *ազատությունը, հավասարությունը, հանդուրժողականությունը* և այլն:

7. Բաղադրիչային հատկանիշների բազմազանության պայմաններում խոսույթի տիպի սահմանման մեջ որոշիչ դեր է կատարում խոսույթի նպատակը: Քաղաքական գործիչների շփման նպատակը կոնկրետ գաղափարախոսության տարածումն է, հասցեատերերի վրա ուղղորդված ազդեցությունը կոնկրետ լեզվական հնարների կիրառման միջոցով: Հենց սրանով է քաղաքական խոսույթը տարբերվում խոսույթի մյուս տեսակներից, քանի որ քաղաքական խոսույթի բոլոր բաղադրիչները հետապնդում են մեկ նպատակ՝ պայքար իշխանության համար:

8. Քաղաքական բանավեճի կառուցվածքային հատկանիշները ունեն բովանդակային բնույթ և բխում են քաղաքական խոսույթի ամբողջական իմաստից:

9. Քաղաքական բանավեճը՝ որպես քաղաքական սուբյեկտների բանավոր գործունեություն, ունի հետևյալ տարբերակիչ ցուցիչները՝ ինստիտուցիոնալություն և գաղափարայնություն:

10. Բանավեճի էական առանձնահատկություններից է նրա չտարանջատվածությունը, այսինքն՝ այն չի հանգում առանձին

հաղորդակցային իրադարձությունների: Բանավեճը անընդհատ է, չունի սկզբի և ավարտի ժամանակային սահմաններ, անհնար է որոշել, թե երբ ավարտվեց առաջին բանավեճը և սկսվեց մյուսը:

11. Քաղաքական բանավեճը բանավեճի մյուս տեսակների համեմատ սոցիումում ունի առավել մեծ հաճախականություն:

12. Հեռուստաբանավեճը՝ որպես քաղաքական երկխոսության դրսևորման ինքնատիպ ձև, օբյեկտիվորեն առանձնացվում է հետևյալ հատկանիշների հիման վրա՝ թեմատիկ սահմանումներ, բառապաշարային-դարձվածաբանական միավորներ, կառուցվածքային-իմաստային կապակցություն, նպատակային դրույթներ և հաղորդակցական մարտավարություններ, շփման մասնակիցների դիրքային և դերային բնութագրություններ, փաստարկման տեսակներ:

13. Քաղաքական խոսույթի տարատեսակ հանդիսացող բանավեճի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ լեզվաոճական տարբեր հնարները մասնակցում են քաղաքական խոսույթի կերտմանը՝ ընդլայնելով խոսույթի ընդհանուր բովանդակությունը և տեղեկատվությունը:

14. Քաղաքական բանավեճի լեզվաոճական հատկանիշները պայմանավորված են ազգային և մշակութային առանձնահատկություններով. լեզվական և արտալեզվական ավանդույթներն իրենց ազդեցությունն են ունենում խոսույթի գործաբանության վրա: Երկրի ռազմավարական ուղղվածությունը, մշակութային ավանդույթները ձևավորում են քաղաքական խոսույթի յուրահատուկ ոճեր «հայկական» և «ամերիկյան», որոնք ներառում են տարբեր ոճերի տարբեր համամասնություն: Քաղաքական խոսույթի ամերիկյան ոճն ավելի պաշտոնական է, քան հայկականը, մինչդեռ հայկական ոճը աչքի է ընկնում առավել արտահայտչականությամբ:

15. Խոսքային հաղորդակցության ազգային ոճը կարելի է բնորոշել որպես լեզվամշակույթի կրողների համար բնութագրական՝ պատմականորեն ձևավորված և ավանդույթներով ամրագրված առանձնահատկությունների հանրագումար: Այն հաղորդակցական վարքագծի ընդհանրություն է՝ ձևավորված որոշակի հաղորդակցական մարտավարությունների մշտական կիրառմամբ և դրանցով պայմանավորված լեզվական միջոցներով: Ուստի մշակույթը խոսքային հաղորդակցական ոճակազմակերպման կարևորագույն բաղադրիչ է:

16. Քաղաքական հեռուստաբանավեճը, լինելով բանավոր քաղաքական երկխոսության տարածված տիպերից մեկը, հնարավորություն է տալիս տեսնելու նրա ազգային հաղորդակցական ոճը և մշակութայնությունը՝ դրանով իսկ ամրագրելով բանավոր խոսքի զարգացման նոր միտումները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Խոսույթի հանրալեզվաբանական ուսումնասիրություն // Բանբեր Երևանի Համալսարանի, Բանասիրություն, 136.2, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 42-49:

2. Քաղաքական գաղափարախոսության լեզվական առանձնահատկությունները // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, գիտական հոդվածների ժողովածու N4, Երևան, «Լուսակն» հրատ., 2012, էջ 43-48:

3. Քաղաքական հեռուստաբանավեճը որպես քաղաքական բանավոր հաղորդակցման տարատեսակ // Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու N1(17), Երևան, «Անանիա Շիրակացի» համալսարան հրատ., 2013, էջ 316-321:

4. Քաղաքական բանավեճը որպես խոսույթի բանավոր հաղորդակցության տարատեսակ // Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանի գիտական տեղեկագիր, N1(18), Երևան, Մանկավարժ հրատ., 2013, էջ 54-61:

Авакян Эдуард Мкртычевич

ЛИНГВОКУЛЬТУРА ПОЛИТИЧЕСКОЙ ДЕБАТЫ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 02.02. «Общая и прикладная лингвистика»

Защита состоится 10 июня 2013 года в 15.00 на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК при институте языка им. Р. Ачабяна НАН РА

Адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича, 15

РЕЗЮМЕ

Данная диссертационная работа посвящена лингвокультурологическому исследованию политических дебатов как элемента дискурса.

Актуальность темы исследования обусловлена высоким интересом общества к политической жизни, в частности, к таким вопросам, как коммуникативные особенности политических дебатов, стратегии речевого воздействия, жанры политических дебатов, а также разработка новых способов и методов выявления национальных особенностей речевого жанра, в данном случае политических теледебатов, при помощи сопоставительного анализа армянской и американской коммуникативных культур.

Научная новизна: в данной диссертационной работе впервые делается попытка исследовать политические дебаты как элемент

политического дискурса. Более того, в работе понятие “политические дебаты” впервые исследуется в рамках более новых дисциплин, в которых множество вопросов еще не получило научного обоснования. В частности, при помощи практического анализа телевизионных дебатов политиков армянского и американского лингвокультур мы выявляем национальные особенности устной коммуникации в русле данного жанра.

Основной **метод** исследования – описательный и включает в себя изучение, сопоставление, обобщение и интерпретацию полученных результатов, а также анализ риторических приемов.

Теоретическая значимость исследования заключается в уточнении понятия речевой стратегии, а также в дальнейшей разработке теории жанров политического дискурса.

Практическая значимость исследования: результаты работы могут быть использованы в курсах по коммуникативной лингвистике, риторической речи, теории речевого воздействия. Работа может быть полезна также тележурналистам и политическим деятелям, заинтересованным в изучении понятия “политические дебаты”.

В первой главе, основываясь на разных подходах русских и зарубежных лингвистов, мы попытались дать четкое определение понятия дискурс, а также описание политического дискурса.

Во второй главе исследуются политические дебаты как элемент политического дискурса, в особенности телебаты, которые, будучи одним из самых распространенных видов устного политического диалога, дают возможность проследить и зафиксировать новые тенденции развития устной речи. Для достижения целей и решения вопросов, выдвинутых в диссертационной работе, мы рассматриваем культурные ценности, представляющие собой значимость с точки зрения поддержания человеческого взаимопонимания и сосуществования.

В третьей главе исследуются национальные особенности языковой культуры политических дебатов. В результате исследования в работе выявлены национальные особенности речевого поведения армянского и американского коммуникативных культур. Проведенный анализ дает нам возможность представить сопоставительное описание речевого поведения.

Eduard M. Avagyan

LANGUACULTURE OF POLITICAL DEBATE

Dissertation for seeking degree of a Candidate of Philological Sciences in Ä.

02.02. General and Applied Linguistics

The defense will be held on 10 June 2013 at 15:00 specialized council of

Linguistics, 019 HAC RA National Academy of Sciences, H. Atcharyan

Language Institute.

Address: 0015, Yerevan, Gr. Lusavorich 15

SUMMARY

The present dissertation is a languacultural investigation of political debate as a discourse type.

The **actuality** of the dissertation is determined by the lack of research of communicative features of political life of public interest, particularly political debate, strategies of speech influence, political debate and its genres, as well as the necessity to develop methods and devices for eliciting national peculiarities of speech, specifically television debates, through a comparative-contrastive study of Armenian and American communication cultures.

The **academic novelty** lies in pioneering to subject to research political debate as a type of political discourse as well as to examine television debate within the frameworks of emerging disciplines yet seeking scientific substantiation for certain issues. Concomitantly, analyzing television debates of politicians from two, Armenian and American, cultures, the research endeavors to explicate national peculiarities of oral communication in the genre at issue.

The major **method** applied throughout the research is that of descriptive entailing the study, comparison, generalization, interpretation of outcomes, as well as the analysis of rhetorical devices.

The **theoretical value** of the research is the clarification of the concept of speech strategy as well as further development of genre theory of political discourse.

The **practical value** of present dissertation is the possible application of the outcomes in university courses of communicative linguistics, rhetorical speech, and theory of speech influence amongst others. It could as well substantially service journalists and politicians interested in political debate. Based upon Russian and other linguists' approaches, the First Chapter is an attempt towards clarifying the definition of discourse providing a general characteristic of political discourse.

The Second Chapter examines political debate, specifically television debate, as a subtype of political discourse. As a widely used spoken political dialogue, television debate makes new tendencies of oral communication visible and recordable. To acquire the aims set forth in the research and to resolve a host of issues, the research takes as its point of departure a plethora of cultural values and principles of utter significance for people's mutual understanding and coexistence.

The Third Chapter encompasses research on national languacultural peculiarities of political debate, subsequently singling out national features of communicative behavior in American and Armenian communication cultures. The analyses conducted allowed us to offer a comparative description of communicative behavior.